ԳԻՐ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԳՆԱՀԱՏԱՆԱՅ ԱՌ ՍԻՐԵՅԵԱԼ ՈՐԴԻՆ ՄԵՐ ԵՒ ՀԱՐԱՋԱՏ ՋԱՒԱԿՆ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅ ՍՐԲՈՅ ԷՋՄԻԱԾՆԻ ՄԵԾԱՐԳՈՅ ՏԻԱՐ ՍՏԵՓԱՆ ՅԱԿՈԲԵԱՆ ՈՐ Ի ՄՈՍԿՈՒԱ, ՌԴ

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից յղում ենք Ձեզ Հայրապետական Մեր օրհնութիւնն ու բարեմաղթանքները:

Ցարգարժան պրն. Յակոբեան,

Նոր Նախիջեւանի եւ Ռուսաստանի Հայոց թեմի Առաջնորդ Գերաշնորհ Տ. Եզրաս եպիսկոպոս Ներսիսեանից գոհունակութեամբ տեղեկացանք Ձեր ազգանուէր եւ եկեղեցաշէն գործունէութեան մասին:

Առ Հայրենին որդիական Ձեր սէրն ու անյոգնաբեկ ջանքերը բազում բարի պտուղներ են տուել մեր ժողովրդի կեանքում: Նախընթաց տարիներին Դուք ազնիւ ընծայաբերումներով գովարժան աջակցութիւն էք բերել «Հայաստան» համահայկական հիմնադրամի ծրագրերին՝ նպաստելով մեր երկրի զօրացմանն ու առաջընթացին եւ մեր ժողովրդի առջեւ ծառացած դժուարութիւնների յաղթահարմանը:

Առանձնակի գոհունակութիւն է Մեզ համար անդրադառնալ Ձեր եկեղեցաշէն վաստակին: Որպէս Նոր Նախիջեւանի եւ Ռուսաստանի Հայոց թեմի բարերար՝ Դուք ազնիւ հոգով մշտապէս զօրակցում էք թեմական Առաջնորդին եւ հոգեւոր դասին իրենց սպասաւորութեան մէջ: Ձեր հոգածութեամբ թեմում իրականացուած եկեղեցանուէր եւ ազգօգուտ նախաձեռնութիւնները նպաստում են Ռուսաստանում բնակեալ Մեր զաւակների հոգեւոր եւ ազգային կեանքի արդիւնաւոր կազմակերպմանը:

Նուիրեալ նոյն ոգով ու նախանձախնդրութեամբ Դուք բարի աւանդ բերեցիք Մոսկուայի առաջնորդանիստ եկեղեցու եւ համալիրի կառուցմանը, որը նոր պայծառութիւն պիտի բերի թեմական կեանքին՝ ի բարօրութիւն հաւատաւոր հայութեան:

Մեր սիրեցեալ Հայրենիքին ու ժողովրդին եւ մեր Սուրբ Եկեղեցուն մատուցած Ձեր ծառայութեանց ու վաստակի բարձր գնահատանքով եւ սիրով ընդառաջ թեմական Առաջնորդի խնդրանքին՝ Հայրապետական այսու Կոնդակով շնորհում ենք Ձեզ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու

ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՒՈՐԻՉ

պատուոյ բարձրագոյն շքանշանը:

Ի խորոց սրտի աղօթքով Բարձրեալն Աստուծոյ շնորհներն ու օգնականութիւնն ենք հայցում Ձեզ եւ նորանոր յաջողութիւններ մաղթում Ձեր բարի գործերին ու նախաձեռնութիւններին:

Թող Տիրոջ օրհնութիւնն ու առատ ողորմութիւնը անպակաս լինեն Ձեր կեանքից եւ ընտանեկան Ձեր յարկից:

«Ապրուած յուսոյ լի արասցէ զՁեզ ամենայն խնդութեամբ եւ խաղաղութեամբ՝ զօրութեամբ Հոգւոյն Սրբոյ. ամէն» (հմմտ. Հռ. ԺԵ.*13):*

Օրհնութեամբ՝

ԳԱՐԵԳԻՆ Բ.
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ Կոնդակս ի 17-ն սեպտեմբերի
յամի Տեառն 2013 եւ ի թուին հայոց ՌՆԿԲ.
ի մայրավանս Սրբոյ Էջմիածնի
ընդ համարաւ 780